— Բերդեր ու ամրոցներ, որոնք կառուցվել են անմիջապես բնակատեղերին կից, ուր պատըսպարվել են բնակիչները թշնամու անակնկալ հարձակումների ժամանակ՝ այսպես կոչված «տիրոջ» տիպի ամրոցաշինական կառույցներ։

— Բերդեր, որոնք ունեցել են վարչական կենտրոնի նշանակություն՝ բերդաքաղաքներ։ Վերջիններս ընդգրկել են ընդարձակ տարածություններ և բաղկացած են եղել միջնաբերդից, շահաստանից ու արվարձաններից։

— Բերդեր, որոնք կառուցվել են որպես հենակետեր՝ «կայան» տիպի ամրոցներ, որոնք ունեցել են համապետական նշանակություն և օգտագործվել են որպես թաքստավայրեր, ամրացված հենակետեր, որոնք նաև օգնում էին բացահայտելու թշնամու զորաշարժերը։

Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԾԻՍԱԿԱՆ ԻՐԵՐ

Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի նախնական շերտերի, աշխարհընկալման ամենատարբեր կողմերի ճանաչման համար զգալի նշանակություն ունեն ծիսական առարկաները, որոնք արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի հասարակական գիտակցության զարգացման մակարդակը։ Եթե նկատի առնենք և այն, որ այդ նյութերը համալրում և զգալիորեն պարզաբանում են հայոց՝ ժամանակագրորեն բավական բազմաշերտ առասպելաբանությունը, ավանդությունների արմատները, ապա պարզ կդառնա նմանօրինակ նյութերի կարևորությունը։ Այս տեսակետից Սյունիքի հնավայրերից հայտնաբերվածները բացառություն չեն կազմում։ Այդ նյութերը ներկայացված են բրոնզե կենդանակերպ արձանիկներով, տարատեսակ կախիկներով, օձագլուխ ապարանշաններով, կենդանակերպ ու շրջանաձև անոթներով։ Քննենք յուրաքանչյուր խումբն առանձին։

Բրոնզե կենդանակերպ արձանիկներ.—Ներկայացված են եղջերուների արձանիկներով ու գավազանի ցլագլուխ քանդակով։ Եղջերուները հինգն են. հայտնաբերվել են Սիսիանի շրջանի Տոլորս, Լծենի[1], Անգեղակոթ և Վաղուդի հնավայրերում մ. թ. ա. II հազ. վերջ—I հազ. I քառորդով թվագրվող դամբարաններից։ Տոլորսի նմուշը թեթևակի բացված ոտքերով, հանգիստ վիճակում կանգնած կենդանու կեցվածքն է ներկայացնում, որի պարանոցին երեք բրոնզաձույլ օղակներ կան։ Պարզ արտահայտված են կենդանու ռունգերը, բերանն ու աչքերը. խոշոր, առանձին ձուլված եղջյուրները տեղադրված են հատուկ բացված անցքերում։ Հինավուրց քանդակագործության հոյակապ նմուշ հանդիսացող այս արձանիկի վրա ակնհայտ է իրականությանը հարազատ մնալու ձգտումը (աղ. I, նկ. 1)։ Նույնը չի կարելի ասել Լծենից գտնված երկու նմուշների վերաբերյալ։ Սրանք առանձնանում են չափերի փոքրությամբ, մանրամասների բացակայությամբ, բայց միաժամանակ և կենդանու հիմնական հատկանիշների, նրա ընդհանուր ձևը շեշտելու ակնհայտ միտումով (աղ. I, նկ. 2—3)։ Նույնը պետք է ասել և Անգեղակոթից (աղ. I, նկ. 4) ու Վաղուդի գյուղից հայտնաբերված (աղ. I, նկ. 5) նմուշների մասին։ Արձանիկներից վերջին երկուսը փորատակերին փոքրիկ գլանիկներ ունեն, որոնց մեջ գավազանի փայտե մասն է ամրացվել։

Բրոնզաձույլ քանդակներից վերջինը գավազանի ցլագլուխ գլխակալն է, որը եղջերուի արձանիկի հետ գտնված է Տոլորսի նշված դամբարանից։ Իրը ցլի գլխի տեսք ունի, որի ճակատին եռանկյունաձև բացվածք կա (աղ. I, նկ. 6)։ Նման գլխակալ հայտնաբերվել է և Առաջաձորից, որի հիման վրա կարելի է վերականգնել զանգուրյան նմուշի ամբողջական տեսքը[2]։ Եղջերուների և ցուլերի բրոնզաձույլ արձանիկներ և գավազան քանդակներ հայտնի են Լճաշեն, Լոռի բերդ, Այրում, Կամո, Թալին, Բամբակաշատ, Ալաշա Հուլուկ և այլ հնավայրերից[3], որը ցույց է տալիս այդ կենդանիների պաշտամունքի լայն տարածումը։ Եղջերվի պաշտամունքը վաղնջական

[1] А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 151, рис. 62_{1-2}; А. О. Мнацаканян. Находки предметов бронзового века в селении Толорс (в Зангезуре) АрмССР. — Краткие сообщения Института истории материальной культуры (КСИИМК), вып. 54, 1954, рис. 2, с. 99.

[2] К. Х. Кушнарева. Некоторые памятники эпохи позднеи бронзы в Нагорном Карабахе.—Советская археология, XXVII, 1957, рис. 5, с. 145.

[3] С. А. Есаян, А. О. Мнацаканян. О статуэтках из Лчашена.—Историко-филологический журнал, 1975, № 2, с. 253—261; С. Г. Деведжян. Лори-Берд I. Ереван, 1981, рис. 14, с. 45.

ժամանակներից է տարածված եղել Հայկական լեռնաշխարհում, Անդրկովկասում և ողջ Առաջավոր Ասիայում[4]։ Այդ է վկայում և Շենգավթից գտնված, մ. թ. ա. III հազ. թվագրվող թասերից մեկը, որի իրանը զարդարված է եղջերուների պատկերներով[5]։ Նշենք, որ Շիրակավանի բնակավայրի մ. թ. ա. III հազ. շերտում հայտնաբերվեցին այդ կենդանու եղջյուրներ։ Եղջերուների պատկերներ ենք տեսնում և Գոյթեփեից, Գուդաբերդկայից, Կվացխելեբիի C շերտից հայտնաբերված նյութերում և այլ վաղ բրոնզեդարյան հուշարձաններում[6]։

Հետազոտողները ցույց են տվել, որ եզը, ցուլն ու եղջերուն հնագույն ժամանակներից սկսած, հիմնականում ունենալով համանման նշանակություն, կապվել են հողմի, ամպրոպի ու արևի հետ[7]։ Այդ են փաստարկում և խեթական տոնակատարությունների նկարագրմանը նվիրված արձանագրությունները, որոնցում եղջերուն, կապվելով արևի աստվածության հետ, միջնորդավորված ձևով առնչվում է և ամպրոպի աստվածությանը[8]։ Ենթադրվում է, որ խեթական արձանագրություններում հիշատակվող «դաշտերի դավակ», «հովանավորող ոգի» անվամբ հայտնի աստվածությունը եղջերուն է անձնավորել[9]։ Նման ենթադրությունը, եթե հաշվի առնենք եղջերվի կապը արևի ու ամպրոպի հետ, որը վերջին հաշվով հանգում է պտղարերության գաղափարին, անհավանական չէ։ Ինչ վերաբերում է եղջերվի և ցուլի՝ հիմնականում համանման բնույթին ու նշանակությանը, ապա դրա վկայություններից կտրող է հանդիսանալ և այն, որ ամպրոպի աստված Թեյշեբայի սրբազան կենդանին հանդիսացել է ցուլը, որի վրա կանգնած էլ նա պատկերվում է։ Այս հավատալիքները իրենց արտացոլումն են գտել և հայ ժողովրդական պատկերացումներում. Էնդիկը ծնվում է արև ժամանակ անձրև գալիս[10] (նման մտայնություն կա և գայլի վերաբերյալ)։

Այսպիսով, հետազոտված իրերը, ունենալով տվյալ պաշտամունքը խորհրդանշող բնույթ, ամենայն հավանականությամբ օգտագործվել են ծիսական արարողությունների ժամանակ, ինչպես ասենք խեթերի մեջ գարնանային «կիլամ» տոնախմբության ընթացքում, երբ նման արձանիկները տանում էին ցուլը լծված կառքի առջևից[11]։

Օձագլուխ ապարանջաններ.—Սյունիքում առայժմ հայտնի են մ. թ. ա. VII—VI դդ. և III—II դդ. թվագրվող նյութերի հետ (վերջիններս գտնվել են Գորիսից)։ Դրանցից մ. թ. ա. VII—VI դդ. թվագրվողները հայտնաբերվել են Շիկահողից (դամբ. № 10), ծիսական նշանակություն ունեցող նյութերի հետ, որը և ենթադրել է տալիս, թե այդ դամբարանը քրմի է պատկանել։ Այդ ապարանջանները երեքն են։ Սրանք զանգվածեղ, կտրվածքում կիսաշրջանաձև տեսք ունեցող բրոնզաձույլ իրեր են, որոնց ծայրերին և միջին մասում բավական ոճավորված օձերի գլուխներ են արված։ Գլուխների միջև ընկած տարածքում երկուական անկյունաձև պատկերներ կան, որոնց արտաքին կողմերից գծիկներ են տրված (աղ. I, նկ. 11)։ Օձագլուխ ապարանջանները Հայաստանում հայտնի են մ. թ. ա. I հազ. սկզբից, բայց օձապատկերները շատ ավելի վաղ են հանդես գալիս, որը և մատնանշում է օձի պաշտամունքի հետ կապված պատկերացումների շատ ավելի խոր արմատներ ունենալը։

Հետազոտելով օձի՝ տիեզերական ծառարմատը զբաղեցնող և հետագայում սատանա անվանված[12] կերպարի իմաստաբանությունը, ուսումնասիրողները ցույց են տալիս, որ անձնավորելով ստորգետնյա աշխարհն ու խավարը՝ այն կապվում է ջրային քաոսի հետ, հանդես գալով իբրև կենսատու ջրերը արգելակող[13]։ Իբրև այդպիսին օձը, այլ կերպ ասած Սանդարամետը, իր Սպանդարամետ աստվածուհով հանդերձ (Սպանդարամետը նույնացվում է Դիոնիսոսի, Բաքոսի հետ և փոխարերական իմաստով անվանվում եր-

---

4 Ս. Հ. Դևեջյան. Եղջերվի պաշտամունքի հետքերը հին Հայաստանում.—«Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 2, էջ 140—152։

5 Ս. Հ. Սարգսյան. Նախնադարյան հասարակությունը Հայաստանում. Երևան, 1967, աղ. LX. նկ. 1։

6 К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили. Древние культуры Южного Кавказа. Л., 1970, рис. 26₁₈, с. 150.

7 С. А. Есаян. Скульптура древней Армении. Ереван, 1980, с. 25.

8 В. Г. Ардзинба. Ритуалы и мифы древней Анатолии. М., 1982, с. 16.

9 О. Р. Гернн. Хетты. М., 1987, с. 124, 165.

10 Ե. Լալայան. Երկեր. հ. 1, Երևան, 1983, էջ 247։ Նույն տեղում նշվում է, որ ժողովրդի մեջ այն պատկերացումը կա, որ եթե անասունը փոշտա՝ թիփի կլինի, իսկ եթե եզը վեր նայի ու հոտոտի՝ անձրև կգա և այլն։

11 В. Г. Ардзинба. Указ. соч., с. 29—34.

12 Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց. Երևան, 1970, էջ 50։

13 Ս. Բ. Հարությունյան. Վիշապասարտը «Սասնա ծռերում».—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1981, № 11, էջ 68։

կիր-պանդոկի ասավածյ[14], կյանքը արգելակող. բայց միաժամանակ և արարող կերպար է։ Պատահական չէ, որ օձը ժողովրդական պատկերացումներում դիտվում է իբրև անմահության, տան



Աղ. I

ունեցվածքի ու լիության, ջրի և պտղաբերության խորհրդանիշ։ Հետաքրքիր է, որ ժայռապատկերներում, գոտիների վրա օձը սովորաբար ներկայանում է եղջերուների և այլ կենդանիների հետ կամ միաձույլ և կամ դրանց հետ մենամարտելիս։ Այս պատկերները խիստ հարազատ են Վահագնի կերպարին, որը հանդես է եկել այծի կամ այլ չորքոտանի եղջերավորի տեսքով օձի հետ միաձույլ կերպարով[15]։ Պատահական չէ, որ հայոց պատկերացումներում օձ-վիշապը գոյանում է եղնիկից[16]։ Եղջերուի և օձի միասնական կեր-

14 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի (այսուհետ ՆՀԲ), հ. Բ, Երևան, 1981, էջ. 693, 734։

15 Բ. Ն. Առաքելյան. Դիտողություններ վիշապաքաղ Վահագնի մասին.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.) 1951, № 2, էջ 75—80։

16 Ե. Լալայան, Երկեր. հ. 1, էջ 241։ Այս միասնությունը կարող էր պայմանավորված լինել, թերևս, հողմի ու նրանից առաջացած թաթառի՝ ժողովրդական խոսքով «վիշապի» միասնական ընկալմամբ։ Հնարավոր է, որ բնության

պարն ինչ տեսնում է Շիրակավանի ոտիներից մեկի պատկերախմբում[17]։ Այդ միասնությունը, ի գեմս վիշապի և վիշապամարտիկի առերևույթ բարեկամության հաստատման, երևան է գալիս և հայ առասպելարանության մեջ, որտեղ պատմական թանձր շերտերի տակ ընկած է վիշապամարտի հնագույն առասպելը[18]։ Հնդեվրոպական առասպելարանության մեջ առանցքային տեղ զբաղեցնող այդ առասպելում պայքարն ավարտվում է ամպրոպային աստվածության հաղթանակով, որի հետևանքով երկիրը վերստանում է պտղաբերելու իր կարողությունը։ Ոձն այսպիսով հանդես է գալիս երկակի՝ իրրև կենսատու (բարի), բայց կյանքը կամովին չտվող (չար) ուժ, որը, սակայն, բոլոր դեպքերում հանգես է գալիս իրրև անմահության և վերածնության խորհրդանիշ։ Ոձագլուխ ապարանջան կրելը, հետևաբար, կապվում է նաև անմահության և վերածնվելու մտքի հետ[19], որն ի վերջո հանգում է պտղաբերության գաղափարին։ Պատահական չէ, որ Թելշևրայի գաստակը զարդարված ենք տեսնում ոձագլուխ ապարանջանով։

Կախիկներ.—բրոնզաձույլ այս իրերը տարբեր ձևեր ունեն։ Դրանցից «ծառաձև» կախիկները յոթն են։ Վաղագույնը, որ բրոնզե լարից պատրաստված ոճավորված եղևնու տեսք ունի, հայտնաբերված է Տանձավերից (դամբ. № 11), մ. թ. ա. XI—X դդ. թվագրվող նյութերի հետ։ Իր երկու կողմից տարված շորսական ճյուղեր ունի, որոնք հիմքամասում խաչաձև են միացված, իսկ գագաթում օղակ են կազմում (աղ. I, նկ. 12)։ Գագաթի նույն օղակներն ունեն և կախիկներից հաջորդ երեքը, որոնք, սակայն, պատրաստված են բրոնզի թերթից և առավել բնական են արտահայտում եղևնու տեսքը։ Երկուսը հայտնաբերվել են Շիկահողից, մ. թ. ա. VII—VI դդ. նյութերի հետ։ Սրանք նույնպես հակադիր կողմերից պարուրագալար ծայրերով շորսական ճյուղեր ունեն։ Մեկի մակերեսը զարդարված է կետ-գծիկներից կազմված երկու շրջաններով, իսկ ճյուղերից չորսը՝ կետերով (աղ. I, նկ. 13, 15)։ Կախիկներից երրորդը, որ երեքական ճյուղ ունի, գտնված է Ղափանից, շինարարական աշխատանքների ժամանակ (աղ. I, նկ. 14)։ Բոլոր երեք կախիկների բոնը հիմքամասում ոլորված է։

Շրջանների ուղղությամբ են և խեցանոթների վրայի ծառապատկերները։ Շրջաններն այստեղ տեղադրված են ծառերի գագաթին և հիմքի մոտ։ Այս նկարներն ենք տեսնում Խնածախից հայտնաբերված տափաշշի (աղ. I, նկ. 17), Տանձավերից գտնված սկահակների վրա։ Այս նյութերը թվագրվում են մ. թ. ա. VII—VI դդ.։

Կախիկների երրորդ խումբն են կազմում զույգ ծառի տեսք ունեցողները։ Մեկը Ղափանից է, հայտնաբերված շինարարական աշխատանքների ժամանակ և ձևով կրկնում է նախորդներին, այն տարբերությամբ, որ հնգական ճյուղ ունի, իսկ գագաթի օղակում ամրացված է կիսված ծառի տեսքով բրոնզաձույլ հավելված։ Սա նույնպես հինգ ճյուղ ունի, իսկ գագաթամասում թույլ կեռիկ է արված (աղ. I, նկ. 16), որը, սակայն, հարմար չէ կապելու համար։ Այս իրը կրելու եղանակը տակավին պարզ չէ. բացառված չէ, որ այն զգեստին է ամրացվել այլ ոչ թե կախվել Տանձավերի և Շիկահողի նմուշների պես (դրանք հայտնաբերվել էին մարդկանց կմախքների կրծքավանդակների վրայից)։ Ղափանից պատահականորեն հայտնաբերված է նման կես ծառի տեսքով ևս մեկ հավելված, որի ետին մասում ամրացված բրոնզյա թերթիկի վրա անցք է արված (աղ. I, նկ. 18) ինչ-որ բանի ամրացնելու համար։

Հետաքրքիր է կախիկներից վերջինը։ Այն հայտնաբերված է Սիսիանի մ. թ. ա. X—IX դդ. թվագրվող դամբարաններից մեկում։ Այստեղ կմախքը բացակայում էր, իսկ նախապես կոարված նյութերը ցրված էին ողջ դամբարանախցով մեկ։ Հայտնաբերված կախիկը ուղղանկյունաձև բրոնզե թերթիկ է։ Ստորին մասում եղած գնդաձև պատկերից սկիզբ առնող ուղղահայաց գծի երկու կողմերից վեր են ձգվում երկուական ճյուղեր։ Դրանցից ցած փոքր թեքությամբ իջեցված են մեկական գծեր։ Տպավորությունն այնպիսին է, որ ասես ծառը կանգնած է ոտքերի վրա, ավելի ճիշտ՝ ծառի մոտ մարդ կա, որի մարմինը չի երևում (աղ. I, նկ. 19)։ Իմաստով այս խմբի ծառապատկերների հետ են կապվում Ուղտասարի ժայռապատկերներից մի քանիսը[20]։ Այդ պատկերներում ծառ-տղամարդ

այս երևույթները մարդու մոտ առաջացրել են երկրի ընդերքից ծայր առնող և ամպրոպային աստծու դեմ մարտնչող վիշապի անձնավորման ընկալումը՝ կապված գարնան, բնության զարթոնքի հետ։

17 Ռ. Մ. Թորոսյան, Օ. Ս. Խնկիկյան, Լ. Ա. Պետրոսյան. Շիրակավանի դամբարանները.—«Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 2, էջ 276, նկ. 2։

18 Ս. Բ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 70։

19 Լ. Վ. Խանդադյան. Գառնի IV. Երևան, 1969, էջ 147։

20 Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան. Սյունիքի ժայռապատկերները. Երևան, 1970։

մեկտեղվելը[21] առավել որոշակի է դիտվում։ Դրանցից մեկը վեր պարզած ձեռքերով տղամարդ է, որի իրանի երկու կողմերից ճյուղեր են տարված (աղ. I, նկ. 20—21)։ Այս պատկերների ճշգրիտ զուգահեռները հայտնի են Գեղամա ժայռապատկերներում[22]։ Ծառի հարևանությամբ կանգնած մարդու պատկերն ենք տեսնում և Կարմիր-բերդից հայտնաբերված բրոնզե գոտու վրա[23]։ Ցնայած ծառաձև կախիկների զուգահեռները այլ վայրերից դեռևս հայտնի չեն, բայց ծառապատկերներով զարդարված տարատեսակ խեցանոթներն ու այլ իրերը բազմաթիվ են Հայաստանի և հարևան երկրների հնագիտական նյութերում։ Ծառի ու զույգ ծառի զարդամոտիվը հաճախ է հանդիպում ուրարտական տարատեսակ նյութերում, ծառ-շրջանը՝ Ասորեստանում և այլն[24]։ Բերված փաստերը վկայում են ծառի պաշտամունքի լայն տարածումը։

Վեր հանելով ծառի պաշտամունքի էությունը, հետազոտողները ցույց են տվել, որ ծառն իր մեջ խտացրել է «տիեզերական» և «կենաց» ծառ երկակի իմաստները։ Իբրև «տիեզերական ծառ» այն արտահայտել է երկինք-երկիր-ստորգետնյա աշխարհ—տիեզերքի եռահորիզոնության գաղափարը, որը դիտվում է որպես նախասկիզբ տիեզերական օվկիանոսից (—ջուր, համադրվում է և նախասկիզբ քաոսին որպես նրա համարժեք) առաջացած իրականություն[25]։ Այս տեսակետից Հին աշխարհի գրավոր աղբյուրները հարուստ նյութ են ընձեռում հետազոտության համար։ Ցխորանալով դրանց քննության մեջ (օր.՝ Թիամատը—ծով, որից ծնվեցին երկինքը, երկիրը, լուսատուները և այլն), նշենք միայն, որ խուռիական դիցաբանությունից մեծապես ազդված խեթական էին, հանդես գալով իբրև տիեզերական օվկիանոսի և ընդհանրապես ջրերի աստվածություն (բայց և որպես տիեզերական ծառի անձնավորում չհիշատակվելով տիեզերաստեղծության ընթացքում), զարմանալիորեն իրեն է վերապահում աստվածներին զսպելու, երկնքի, երկրի տնօրինությունը այս կամ այն աստծուն հանձնելու իրավունքը, որը հանդիպում է Կումարբիի և մյուս աստվածների պատմության դրվագներում-ը, որով իսկ ընդգծվում է էական ավագագույն աստվածություն լինելը։ Այլ ուսումնասիրողներ[27] այս երևույթը վեր են հանում Թեյշեբայի առնչությամբ։ Հարկ է նկատել, որ ջուր=նախասկիզբ մտայնության արձագանքները պահպանվել են նաև հայ ժողովրդի՝ տիեզերաստեղծության վերաբերյալ եղած պատկերացումներում[28]։

Ծառն այսպիսով կապվելով տիեզերական ջուր իմաստի հետ, խորհրդանշում է տիեզերքի երեք հորիզոնների՝ ջրից առաջանալու և սկզբնապես դրանց միասնական լինելու իմաստը[29]։ Բնական

21 Ծառ-տղամարդ պատկերը առնչվում է մեռնող և վերակենդանացող աստվածության պաշտամունքի հետ։ Այս առումով ուշագրավ է Սյունիքում պահպանված մի ավանդություն քաջ Բարսեղի մասին, որը մի շարք մանրամասներով համընկնում է Սոսանվեր Անուշավանի միջոցով ծառին առնչվող Արա Գեղեցիկի մեկ այլ տարբերակը հանդիսացող, մինչ այժմ անուշադրության մատնված, Շամիրամ-Բարզանեսի առասպելի հետ։ Ակներևաբար Դերկետո-Շամիրամի մասին եղած առասպելի զուգահեռն է Սյունիքում «հարսի թոնիր» անունով հայտնի ավանդությունը։ Տե՛ս Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 375—376։ Մ. Աբեղյան. Երկեր. հ. է, Երևան, 1975, էջ 154—165։ Գր. Ղափանցյան. Արա Գեղեցիկի պաշտամունքը. Երևան, 1944։ Ա. Ղանալանյան. Ավանդապատում. Երևան, 1969, էջ 44, 98, 106։

22 Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Իսրայելյան. Գեղամա լեռների ժայռապատկերները. Երևան, 1971, նկ. 310, 317։ Հ. Ռ. Իսրայելյան. Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում. Երևան, 1973, նկ. 44, 45, էջ 81—82։

23 С. А. Есаян. Ереван (Археологический очерк). Ереван, 1969, табл. 27.

24 Б. Б. Пиотровский. История и культура Урарту. Ереван, 1944, с. 315—317.

25 Հ. Ա. Մարտիրոսյան. Գիտությունն սկսվում է նախնադարում։ Երևան 1978, էջ 67։

26 Հին Արևելքի պոեզիա. Երևան, 1982, էջ 182—187, 524, 534։

27 Ս. Գ. Համայակյան. Ուրարտական Խալդե և Արուրանե աստվածությունների մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 2, էջ 129։

28 Տե՛ս Ե. Լալայան. Երկեր. հ. 1, էջ 212—215, 239; Վ. Պետոյան. Սասնա ռազագրությունը. Երևան, 1965, էջ 342։ Ստ. Լիսիցյան. Լեռնային Ղարաբաղի հայերը. Երևան, 1981, էջ 66—67։

29 «Առասպելաբանության մեջ ջուրը (—ծով), երկինքն ու օդը միևնույն իրականության, այն է՝ տիեզերքի տարբեր արտահայտություններն են»,—գրում է Ս. Բ. Հարությունյանը (տե՛ս Ս. Բ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 67)։ Վ. Ն. Տոպորովի մոտ կարդում ենք. «...Երկնային ծովը մասն է կազմում այն քաոսային ջրային տարերքի, որը բոլոր կողմերից շրջափակում է տիեզերքը և այս իմաստով այն համարժեք է դառնում ստորին աշխարհին» (В. М. Топо-

է, որ նույն տարրը կարտահայտվեր միևնույն խորհրդանիշով և հետաքրքիր է, որ հայկական նշանագրերում երկինք-երկիր գաղափարներն արտահայտված են միատեսակ շրջաններով, որոնք տարբերվում են սոսկ վեր ու վար տարված կարճ գծիկներով[30]։ Համահնչուն լինելով Ռիգվեդայում՝ երկինք-երկիր, ընդհանուր առանցքով իրար միացած անիվների պատկերմանը[31], այս նշանագրերը փաստորեն նույնանում են տափաշշի և սկահակների «տիեզերական ծառի» առավել ռեալիստորեն արտահայտված պատկերների, ինչպես և Շիկահողի կախիկի հետ, որտեղ շրջանները ծառի մեջ են տեղադրված։ Ասենք նաև, որ վրաց ժողովրդի տիեզերական պատկերացումներում ևս, որպես տիեզերքի երեք հորիզոններն իրար միավորող հանդես է գալիս երկրի ծայրում գտնվող տիեզերական ծառը[32] և այլն։ Բերված օրինակները, որոնք թվարկվածներով չեն սպառվում, ցույց են տալիս, որ տիեզերական ծառի—տիեզերքի եռահորիզոնության գաղափարը համապարփակ, համամարդկային բնույթ է ունեցել։

Կախիկների հաջորդ խումբն են կազմում թռչնի ձև ունեցողները, որոնք հայտնաբերված են Խնածախից (մ. թ. ա. VII—VI դդ., աղ. I, նկ. 9) և Սիսիանից (աղ. I, նկ. 8)։ Կախիկների մեջքի վրա օղակներ են պատրաստված, իրանները զարդարված են եռանկյունաձև ու տերևաձև անցքերով։ Այս նմուշների զուգահեռները բազմաթիվ են Հայաստանի և ընդհանրապես Անդրկովկասի ուշ բրոնզ-երկաթեդարյան հուշարձաններից հայտնաբերված նյութերում։ Այդ կախիկների մեջ, ինչպես և զանազան ծեսերի ժամանակ գործածված տարատեսակ ծավալային քանդակախմբեր ներկայացնող թռչունների, եղջերուների և այլ կենդանիների սնամեջ իրանով արձանիկներում գնդիկներ են տեղադրված, որոնք շարժման ընթացքում ձայն են արձակել։ Զայնին մարդը չարխափան, չարը վանող իմաստ է վերագրել, դրանով ինք ասես կամեցել է կրկնապատկել պահպանակ հանդիսացող նման իրերի զորությունը։

Պայմանականորեն այս խմբում ենք դասում Շիկահողից մ. թ. ա. VII—VI դդ. նյութերի հետ հայտնաբերված բրոնզաձույլ դաշույն-կախիկը, որի դաստակը ավարտվում է արծվագլուխ ելուստով (աղ. I, նկ. 7)։ Այս իրը, որքանով մեզ հայտնի է, դեռևս եզակի է. հեռավոր նմանություն ունի Կարմիր բլուրից հայտնաբերված, հավանաբար, դաշույնի դաստակի՝ գիշատիչ թռչնի կատարի ոճավորված գլխամասին։ Վերջինս մերձենում է Անդրկովկասի հնավայրերից հայտնաբերված սակավաթիվ նյութերի այն խմբին, որոնք կրում են սկյութական, այսպես կոչված, «գազանային ոճի» կնիքը[33]։ Սյունիքի նմուշի յուրօրինակ ձևը, հավանարար, նույն սկյութական աղդեցությանարտահայտություն է (այս տեսակետից ժամանակագրական տարբերություններ չեն դիտվում) տեղական ծագում ունեցող այս իրի վրա, որն առաջին անգամ է հանդիպում Սյունիքում։ Իրի չարխափան նշանակությունն այս դեպքում արտահայտում է զենքը (դաշույն), նրան վերագրվող իմաստը։ Տպավորությունն այնպիսին է, որ պահպանակների մեջ ներդրված ձայն-աղմուկ և զենք իմաստներով մարդը, ասես, կամեցել է կրկնապատկել թռչնի չարխափան զորությունը։ Թռչունը, ինչպես տեսնում ենք խեցանոթների և գոտիների պատկերներից, ժայռանկարներից, կնիքներից և այլն, կապվելով ջուր-օդ-երկինք-գաղափարների հետ և հանդես գալով իբրև մեդիատոր ստորին և վերին հորիզոնների[34], պայքարում է տվյալ դեպքում չարը անձնավորող օձի հետ։ Այս իմաստով թռչունը, ինչպես և եղջերուն, առնչվում է վիշապամարտին և դրանով իսկ արտահայտում իր կապը դարնան, բնությունը զարթոնքի հետ։ Հետաքրքիր է, որ խեթական ծեսում թագավորն ու թագուհին, ամպրոպի և արևի աստվածություններին դիմելու ժամանակ պատգամաբերի դերը արծվին են հատկացրել[35]։

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում և «երկանիվ» կախիկները։ Տանձավերից և Ղափանից շինարարական աշխատանքների ժամա-

---

ров. Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции.— Историко-филологический журнал, 1977, № 3, с. 102.

30 Ա. Գ. Աբրահամյան. Հայ գրի և գրչության պատմություն. Երևան, 1959, էջ 150։

31 Мифы народов мира. Т. II, М., 1982, с. 207.

32 Նույն տեղում, հ. I, 1980, էջ 605։

33 С. А. Есаян, М. Н. Погребова. Скифские памятники Закавказья. М., 1985, с. 104—106, табл. XIX, рис. 4.

34 Мифы народов мира. Т. II, с. 258—260, 346.

35 В. Г. Ардзинба. Указ. соч., с. 123—124. Թռչնի կապը օդի, արևի և ջրի հետ իր արտացոլումն է գտել հայկական ավանդություններում, առասպելներում, հեքիաթներում. տե՛ս Մովսես Խորենացի. Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 136։ Ա. Ղանալանյան. Նշվ. աշխ. էջ 3—4։

նակ հայտնաբերված այս իրերը չնայած միանման տեսքին, որոշ մանրամասներով տարբերվում են։ Այսպես, Տանձավերից հայտնաբերված ընդհանուր առանցք ունի, որի գագաթամասում արված օղակի հիմքից աջ ու ձախ տարված երկուական ելուզերը միանում են առանցքի երկու կողմերը զարդարող, լուանկյունաձև անցքեր ունեցող անվակներին։ Դրանց կենտրոնական մասում առկա են մեկական շրջանաձև ելունդներ։ Երեք նույնանման ելունդներ ուղիղ գծով զարդարում են անվակների միացման հատվածը, որոնցից ներքև երկու պարույրներն են ու դրանցով ստացված, գագաթով վեր ուղղված եռանկյունաձև բացվածքը։ Իրի ընդհանուր առանցքի վրա, օղակից, որի տակ ելունդավոր շրջան է արված, մինչև անվակների միացման հատվածն է ձգվում ուղղագիծ հասկազարդը, որի հատիկները ներքև են ուղղված (աղ. I, նկ. 24)։ Ինչ վերաբերում է Ղարանից գտնվածին, ապա դրա հասկազարդի հատիկները վեր են ուղղված, պարույրները զարդարում են օղակի աջ և ձախ կողմերը, առանցքից մեկական ճյուղեր են միանում կրկին եռանկյունաձև անցքերով զարդարված անվակներին (աղ. I, նկ. 23)։ Նման իրեր հայտնի են Սևանի ավազանից և Մինգեչաուրի IV դամբարանթումբից[36]։ Որոշ նմուշների վրա առկա են թռչունների քանդակներ, որոնք խոսում են այսօրինակ կախիկների՝ տիեզերական պատկերացումների, մասնավորապես երկնային լուսատուների հետ առնչվելու մասին։ Հետևաբար հասկազարդերի առկայությունը ցույց է տալիս լուսատուների ուղղակի կապը բերքի ու առատության հետ, դրանով իսկ ընդգծելով այն իմաստը, որ «...ամեն ինչ ղեկավարվում է Արեգակով և Լուսնով և գետնի վրա գտնվածներից ոչ մի բան նրանց ենթակայությունից դուրս չէ»[37]։

Իմաստով կախիկների ընդհանուր խմբից առանձնանում է ձեռքի տեսքով պատրաստվածը, որը հայտնաբերվեց Խնածախից մ. թ. ա. VII—VI դդ. նյութերի հետ։ Ձեռքի բութ և ճկույթ մատները թեթևակի վնասված են, որը դժվարացնում է վստահորեն ասել աջ ձեռքն է, թե՞ ձախը։ Թռչնի պոչ հիշեցնող դաստակի կենտրոնում կախելու համար անցք է արված (աղ. I, նկ. 10)։ Այս իրը, որի զուգահեռները հայտնի են կենտրոնական Կովկասի հնավայրերում[38], Հայաստանում առաջին անգամ է հանդիպում։ Սակայն ձեռքի պաշտամունքը Հայաստանում լայն տարածում է ունեցել, որի վկայությունն են երկարեղարյան շիդղերի որոշ նմուշներ, որոնց մի ծայրը ձեռքի տեսք ունի (Կամո. Արգիշթիխինիլի, Թալին, Գոլովինո, Դաշբուլաղ և այլն)[39]։ Ազգագրական և բանահյուսական նյութերի համադրումը ենթադրել է տալիս, որ նախնական մտածողության որոշակի մակարդակում մարդ ձեռքին հմայական նշանակություն է տվել շեշտելով ձեռքի արարող նշանակությունը։ Ձեռքն արտահայտել է և իշխանության, ուժի, զորության իմաստը[40]։ Պատահական չէ, որ իրրև օրհնանք կամ անեծք ասվում է «ձեռքդ կանաչի կամ դալարի», բայց և «ձեռքդ չորանա» և այլն։ Միաժամանակ աջ և ձախ ձեռքերը խորհրդանշել են արական և իգական, դրական ու բացասական, վերևի ու ներքևի գաղափարները[41]։

Կենդանակերպ ու շրջանաձև անոթներ.—առաջինները ներկայացված են եղջերվի և ձիերի տեսք ունեցող կավակերտ նմուշներով։ Եղջերվաձև անոթը հայտնաբերված է Շիկահողի № 10 դամբարանից։ Թերի պահպանված եզջյուրները, գլուխն ու մարմինը զարդարված են դրոշմազարդ բոլորակներով ու փորագիր գծերով։ Կենդանու մեջքին ձագարաձև անցք է՝ ծեսերի ժամանակ հատիկ կամ հեղուկ լցնելու համար (աղ. II, նկ. 1)։ Դա փաստարկվում է և խեթական աղբյուրների տվյալներով։ Հատկանշական է, որ այդ անոթները բացվել են գարնան տոների ժամանակ և փակվել աշնանը, անոթը վերստին լցնելուց հետո։ Անոթի բացումը խորհրդանշել է գարնանային եղանակի բացումը, անձրևների սկիզբը, որոնք գտնվել են ամպրոպի աստծու տնօրինության տակ[42]։

---

36 Ռ. Լալայան. Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում. Երևան, 1931; Г. М. Асланов, Р. М. Ваидов, Г. И. Ионе. Древний Мингечаур. Баку, 1959, табл. XIX, рис. 26.

37 Անանիա Շիրակացի. Մատենագրություն. Երևան, 1979, էջ 117։

38 Б. В. Техов. Центральный Кавказ в XVI — X вв. до н. э. М., 1977, с. 140—141.

39 А. А. Мартиросян. Аргиштихинили. Ереван, 1974, рис. 94. Զ ու. Ասրյան. Հնագիտական նորահայտ նյութեր Լեռնային Դարաբաղից.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1982, № 9, տախ. 2, էջ 94—100։

40 Ա. Ա. Ստեփանյան. Ձեռքի մոտիվի դրսևորումը հայ ժողովրդական դրծվածքների զարդանախշերում.—ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի VI կոնֆերանսի թեզիսներ, Երևան, 1984, էջ 39—40։

41 Мифы народов мира. Т. II, с. 44.

42 В. Г. Ардзинба. Указ. соч., с. 11, 26.

կենդանակերպ անոթների հաջորդ խումբն են ձիու տեսք ունեցողները։ Ղափանից (աղ. II, նկ. 2), Տանձավերից (աղ. II, նկ. 3), Շիկահողից (աղ. II, նկ. 4), Գեղանուշից (աղ. II, նկ. 5)[43], Խնածախի նմուշի, մեջքի վրա ձագարաձև անցքեր ունեն, որոնք Խնածախի անոթի վրա փոխարինված են կենդանու կողերին ամրացված երկու հաղորդակից կնճուճներով. դրանց ուսերը հատի-

Աղ. II

Բաղաբուրջից և Խնածախից (աղ. II, նկ. 6) հայտնաբերված այս անոթները, բացառությամբ Խնածախի և Տանձավերի օրինակների (մ. թ. ա. VII—VI դդ.), գտնվել են շինարարական աշխատանքների ժամանակ։ Բոլորն էլ, բացառությամբ կաղարդ են։ Այստեղ առկա է կենցաղային հետաքրքիր իրողություն. կենդանու երկու կողմերին կախված իրար հավասարակշռող անոթների առկայությունը ինքնին ենթադրում է յուրօրինակ բեռնաթամբի առկայությունը վաղնջական ժամանակներում։ Բեռնաթամբի իմաստն են արտահայտում և մյուս անոթների կողերին եղած ձվաձիր ելունդավոր հավելվածները (աղ. II, նկ. 4, 5)։

---

43 Գեղանուշի երկրորդ օրինակը գտնված է Ռ. Մ. Թորոսյանի պեղումներից՝ մ. թ. ա. VII—VI դդ. Բվագովող «քրմի դամբարանից»։ Նյութը հրատարակված չէ։

Դառնալով Խնածախի նմուշին, նկատենք, որ հատիկազարդերն առկա են կենդանու ոտքերի, զավակի, կրծքի ու մեջքի վրա, կողերին արված են փորագիր ուղղահայաց գծեր, իսկ աչքերն արտահայտված են կետաշրջաններով։ Այս զարդերը Տանձավերի նմուշի վրա փոխարինված են երեք հորիզոնական գոտիներում ամփոփված ցանցագծերով, իսկ Գեղանուշից պատահականորեն հայտնաբերված օրինակում՝ երկու և երեք շարքով տարված բեկբեկուն կետազարդերով։

Կենդանակերպ նման անոթներ Հայաստանի և ընդհանրապես Անդրկովկասի այլ հնավայրերում հայտնի են Մուսիերիից (երկար վզով և կարճ ոտքերով անորոշ կենդանու տեսք ունի և միայն պայմանականորեն է դասվում այս խմբում), Թալիշի՝ Ջոնի և Ռաղգուար հնավայրերից[44]։ Այսմիջում հայտնաբերված այս անոթները, զգալիորեն համալրելով համարները, բայց այլաձև անոթների տեսակներին, հարստացնում են մեր պատկերացումները նախնադարյան ծեսերում կիրառվող անոթների ձևերի մասին։ Ձիու պաշտամունքը, խոր արմատներ ունենալով, լայն տարածում է ստացել, ինչը լավագույնս փաստարկվում է այլևայլ նյութերի, մասնավորապես բրոնզե գոտիների վրա եղած պատկերներով, որտեղ ձին հանդես է գալիս արևի համադրությամբ և այլն։ Այս տեսակետից առանձին կարևորություն է ձեռք բերում Քսենոփոնի վկայությունը, որից երևում է, թե Հայաստանում Արևին ձիեր են զոհաբերել[45]։

Ծիսական անոթների վերջին խումբն են շրջանաձև, սնամեջ իրան ունեցողները։ Սրանք հինգն են. ներկայացված են առանձին տարբերակներով։ Մեկը հայտնաբերված է Շիկահողից, մ. թ. ա. VII—VI դդ. նյութեր պարունակող շինարարական աշխատանքների ժամանակ ավերված դամբարանից։ Անոթը շրջանաձև իրանի ստորին մասում երեք ոտք ունի, որոնց ուղղությամբ, իրանի վերին մասում արված են եղեյ ձիերի երեք գլուխներ։ Երկուսը թիերի են, իսկ մեկի գագաթամասը կոտրված է։ Անոթի իրանը զարդարված է ծառերի փորագիր պատկերներով և հորիզոնական տարված գծազարդերով ու դրանց երկու կողմից հպվող թեք գծիկներով (աղ. II, նկ. 8)։ Անոթներից հաջորդը հայտնաբերված է Անգեղակոթ գյուղում, մ. թ. ա. IX—VIII դդ. թվագրվող նյութերի միջավայրում։ Թերի վիճակում դամբարան դրված այս իրը երեք ոտք ունեցել, որոնցից մեկն է պահպանվել։ Իրի վերին մակերեսին, ամենայն հավանականությամբ, եղել է ինչ-որ հարդարանք, որը չի պահպանվել։ Անոթի իրանը ստորին կեսում զարդարված է թեք տարված ծալազարդերով, իսկ վերին կեսը հորիզոնական ալիքաձև տեսք ունի։ Մեկի վրա հասկաձև զարդագոտի կա (աղ. II նկ. 7)։ Անոթներից երրորդը գտնվում է Գորիսի Ռանգարանում։ Պատահականորեն հայտնաբերված այս անոթը (Կոնիձո՞ր) տարբերվում է նախորդներից ոտքերի բացակայությամբ և իրանի վերին մասում տեղադրված երեք ձագարաձև անցքերի առկայությամբ։ Անոթի կողերն ու հատակը զարդարված են փորագիր անկյունապատկերներով (աղ. II, նկ. 9)։ Այս անոթին է պատճենում Տեղ գյուղից մ. թ. ա. X—IX դդ. նյութերի հետ հայտնաբերվածը, տարբերությամբ, որ իրանի վրա օղակաձև կանթ ունի, իսկ ստորին մասում՝ երեք ոտիկներ (աղ. II, նկ. 10)։ Անոթներից վերջինը հայտնաբերվել է Ռ. Մ. Թորոսյանի կողմից, Գեղանուշից։ Այն ոտքեր չունի։ Վերին մակերեսին տակա են կճուճի և գավաթի տեսքով հավելվածներ։

Արևելյան Հայաստանի և ընդհանրապես Անդրկովկասի տարածքում նման անոթներ հայտնի են Կարմիր բլուրից և Մուսիերիից[46]։ Անոթների այս տեսակի զուգահեռները, պատրաստված կավից և արծաթից, երկաթեդարյան ժամանակաշրջանին պատկանող նյութերի հետ հայտնի են Իրան-Լուրիստանից[47]։

Այս անոթները նույնպես կապված են երկնային լուսատուների պաշտամունքի հետ։ Մասնավորապես այդ են մատնանշում ձիու տեսք ունեցող, ինչպես և ձագարաձև հավելվածները։ Ենթադրվում է, որ շրջանաձև անոթները գործածվել են տարեկան տոների ժամանակ տեղի ունեցող ծեսերում կամ արևի ու լուսնի պաշտամունքի հետ կապված զոհաբերություններում։ Նման երևույթ, ինչպես օրինակ նորալուսնի ժամանակ կատարվող զոհաբերությունները, տեսնում ենք ուրարտական ձեսերում, իսկ Աստղեստանում

---

44 J. de Morgan. La prèhistoire Orientale. T. III, Paris, 1927, fig. 267, 268, p. 280—281, fig. 30).

45 Քսենոփոն. Անաբասիս. Երևան, 1970, էջ 98։

46 Ա. Փիլիպոսյան. Հայաստանի կենոսատիպ անոթները.—Թեզիսներ ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևան, 1983; J. de Morgan. Op. cit., fig. 307.

47 М. Н. Погребова. Иран и Закавказье в раннем железном веке. М., 1977, табл. XIX, рис. 8. L. Vanden Berghe. Luristan een verdwenen bronskunst nit West-Iran. Gent, 1983, fig. 186.

զոհաբերություններ են արվել նորալուսնին և լուսնի երկու փուլերին[48].

Ամփոփելով Սյունիքի հնավայրերից հայտնաբերված արձանիկների, տարատեսակ կախիկների, ապարանջանների, ինչպես և զանազան ծեսերի ժամանակ օգտագործված կենդանակերպ ու շրջանաձև խեցանոթների հետազոտությունների արդյունքները, կարող ենք նշել, որ դրանք, մասկազմելով համա՝հայաստանյան միասնական մշակույթի, արտացոլում են բնության երևույթների և ընդհանրապես տիեզերքի մասին մեր նախնիների ունեցած պատկերացումները։ Հիշյալ նյութերի քննությունը, համադրումը բանահյուսական, ազգագրական և այլ աղբյուրների տվյալների հետ, ցույց է տալիս, որ բրոնզի ու երկաթի դարաշրջանում արդեն իսկ ձևավորվել էր տիեզերակազմության, վիշապամարտի, լուսատուների և այլ աստվածությունների վերաբերյալ եղած առասպելների առաղձը։ Այս նորահայտ նյութերը երևան են բերում մեր նախնիների աշխարհընկալման մանրամասները, բացահայտում, ընդլայնում են Հայաստանի՝ հարևան երկրների հետ ունեցած կապերի վերաբերյալ եղած իմացությունները։

48 Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 230։

Օ. Ս. ԽՆԿԻԿՅԱՆ

НЕСКОЛЬКО ЗАМЕЧАНИЙ ОБ ОБРАЗЕ МОИСЕЯ НА РЕЛИКВАРИИ 1293 ГОДА

Среди выдающихся произведений художественной культуры Армении в первом ряду по праву стоит серебряный, с позолотой, чеканной работы триптих-реликварий, выполненный в 1293 г. в монастыре Скевры (Киликийская Армения) и хранящийся ныне в Эрмитаже (инв. № Vз-828)[1].

Более чем за полуторастолетнюю историю изучения этого памятника о нем накопилась значительная литература, в которой многие вопросы принципиального и частного характера, связанные с исследованием триптиха с художественной и исторической стороны, нашли должное освещение[2]. И все же историко-художественная значимость этого памятника так велика, что остается немало проблем, которые все еще требуют к себе внимания. Мы остановимся на одной из них.

На реликварии вычеканено тридцать два фигурных изображения избранных ветхо- и новозаветных персонажей, отцов церкви, армянских исторических деятелей (Григора Лусаворича, Вартана Мамиконяна, царя Гетума II и др.). Четверо из них представлены в рост, некоторые—по пояс, большинство—по грудь. Все изображенные снабжены пояснительными армянскими надписями, часть образов имеет характерные атрибуты (апостолы и святители с книгами, Петр с ключом от врат рая, Павел с мечом, пророки со свитками, воины при оружии и т. п.).

Среди представленных на реликварии пророков видим Моисея. К его образу мы и обратимся. Его погрудное изображение в медальоне помещено среди таких же изображений на правой торцовой стороне триптиха, между Симоном (названным «Шмавоном»—*Շմավոն*) и Симеоном. Все пророки на складне (Исайя, Илья, Давид, Иоанн Предтеча) представлены в облике старцев. Моисей составляет исключение: он юн, без бороды. У пророков в руках свитки, причем у всех они развернуты (у большинства с насечками, долженствующими обозначать их пророчества) и только Моисей сжимает в левой руке свернутый свиток. Эта бросающаяся в глаза деталь

1 Размеры: выс.—63,5 см, шир.—35,5 (с раскрытыми створками—69,5), см., толщ.—7,5 см. Осн. лит.: S. Der Nersessian. Le reliquaire de Skevra et l'orfèvrerie cilicienne aux XIIIe et XIVe siècles.—Revue des études arméniennes, n. s., t. I. Paris, 1964, p. 121—147; Ա. Կակովկին. Հայ արվեստի նշանավոր հուշարձանը.—Вестник Ереванского университета, 1979, № 3, с. 118—135; А. Я. Каковкин. Выдающийся памятник армянского искусства (Скеврский складень-реликварий 1293 г.).—II Международный симпозиум по армянскому искусству. Сб. докладов, т. IV. Ереван, 1981, с. 108—113.

2 Критический обзор литературы о памятнике (до 1978 г.) см: А. Я. Каковкин. Скеврский складень 1293 г.: итоги исследований за 150 лет.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 1, էջ 92—97.